



Ֆինանսավորում է
Եվրոպական միության կողմից



Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում

-ՌԱՄԱ մեթոդաբանություն-

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու և էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ՌՈՋՖՌՈՒԴ» ՍՊԸ
- Սննդի արտադրություն -

Կազմակերպության մասին

Հասցե՝ 1ա/1 Հակոբյան փող., Վանաձոր, Լոռու մարզ, Հայաստան
Հիմնական ապրանքներ՝ Բանջարեղենի պահածոներ, սառեցված բանջարեղեն, կոմպոտներ, մուրաբաներ և բնական հյութեր
Աշխատակիցների քանակ՝ 46
Հիմնական շուկա՝ Հայաստան
Արտահանում՝ Ռուսաստան, ԱՄՆ, ԵՄ երկրներ
Հիմնադրման տարեթիվ՝ 2005



«ՌոՋՖռուդ»-ը բանջարեղենի ու մրգերի մշակման փոքր ընկերություն է, որտեղ արտադրվում է կոնսերվացված ու բնական մթերքների լայն տեսականի, որի մեջ մտնում են սառեցված բանջարեղենը, բնական մուրաբաներն ու կոմպոտները, հյութերն ու նեկտարները: Հումքն ամբողջությամբ տեղական է: Ընկերության շուկան ներկայումս ընդլայնվել է և այժմ ներառում է արտահանում դեպի ԱՄՆ, Ռուսաստան և Եվրամիության մի շարք երկրներ: Իր հիմնադրման սկզբից «ՌոՋՖռուդ»-ն ուներ որդեգրված փիլիսոփայություն՝ ապահովել բնական ու առողջարար արտադրանք, առանց որևէ հավելյալ քիմիական նյութերի՝ կենտրոնանալով որակի ու թարմության վրա: Այս առավելությունները հանգեցրին աճի լրացուցիչ հնարավորությունների՝ նպաստելով հզորության ավելացմանը, երեք անգամ ավելի մեծ, քան սկզբնական արտադրանքը: Իր բնապահպանական ցուցանիշները բարելավելու ու ռեսուրսների օգտագործումը (նյութեր, ջուր, էներգիա) օպտիմալացնելու նպատակով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական ծրագրին՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի շրջանակներում (2013-2017): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2021 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից չորս տարի անց:

Առավելություններ

- 13 ՌԱՄԱ տարբերակների իրականացում
- Ընդհանուր տնտեսական խնայողություններ՝ 13,792 եվրո/տարի
- Ընդհանուր մարման ժամկետը՝ 7 տարի
- Մեկ վերամշակված կգ-ի էլակետային սպառման կրճատում էլեկտրականություն՝ 14.3 % | Բնական գազ՝ 26 % | Զուր՝ 29 %
- Արտանետումների կրճատում՝ 77 տոննա CO₂
- Էներգաարդյունավետ սարքավորումների ու արևային տեխնոլոգիայի տեղադրում՝ էլեկտրաէներգիայի, ջեռուցման ու լվացման գործընթացների համար

Action implemented by:





Նախագծի մուտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ 13 տարբերակներ, որոնք դարձան առաջնահերթ ու աստիճանաբար իրականացվեցին ընկերության կողմից:

Արտադրական գծի վերակազմավորում: Արտադրության հոսքը վերակառուցվել է շարունակականության, հզորությունների հավասարակշռության ու ռեսուրսների օպտիմալացման համար: Արտադրության կրճատված ժամանակը և էլեկտրաէներգիայի, գազի ու ջրի սպառումը նվազագույնի հասցվեցին պարապուրդի ու ընդհատումների կրճատման շնորհիվ (վերացվեցին նաև հումքի ու վերջնական արտադրանքի կորուստները):

Մաշված տեխնոլոգիական սարքավորումների փոխարինում ավելի ժամանակակից ու հզոր սարքավորումներով: Սարքավորումների փոխարինումը հիմնված էր ոչ միայն նոր մեքենաների, այլև արտադրական հզորությունների ու բարձր արդյունավետության պահանջարկի միջև համարժեք հավասարակշռության պահպանման վրա:

Գոլորշու հին կաթսայի փոխարինում: Տեղադրվել է ավելի բարձր արդյունավետությամբ նոր կաթսա, որի շնորհիվ հնարավոր է վերադարձնել օգտագործվող գոլորշու կոնդենսատը (խնայելով նաև վառելիքը): Նոր կաթսայի տեղադրումից հետո լրացուցիչ խնայողություններ ստեղծելու համար նաև նախատեսվում են սնուցող ջրի մաքրման համակարգի բարելավումներ:

Արևային ջրատաքացուցիչի տեղադրում: Արևային էներգիայով ստացվող տաք ջուրն այժմ օգտագործվում է արտադրության ներքին պահանջները բավարարելու համար՝ նվազեցնելով գազի կամ էլեկտրաէներգիայի պահանջը:

Ներցանցային ՖՎ արևային համակարգ: 103.5 կՎտ հզորությամբ համակարգի տեղադրմամբ ընկերությունը նվազեցրեց էլեկտրաէներգիայի սպառումը ազգային ցանցից և բարելավեց անվտանգության հետքը:

Ներքին ու արտաքին ոչ արդյունավետ լուսավորության համակարգի փոխարինում LED լամպերով: Այս միջոցառման էներգախնայողության ակնհայտ առավելությունների հետ մեկտեղ բարելավվել են նաև աշխատողների լուսավորության պայմանները:

Նյութերի ու թափոնների առաջացման կրճատում: Պարամետրերի բարելավումը՝ ջերմաստիճանը և օդափոխությունը հումքի պահեստում, չափազանց կարևոր են եղել թափոնների կրճատման համար: Ընկերությունը գնել է սառնարանային սարքավորումներ և շարունակաբար աշխատում է իր ջերմամեկուսացման ու պահեստների օդի հոսքի բարելավման ուղղությամբ: Նաև թերություններով մետաղական կափարիչները հավաքվում են և անվճար վերամշակվում:

Պահպանելով ձեռքբերումները

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մոնիթորինգի հաշվետվության վերջում ընկերության անձնակազմի կողմից իրականացվել է **ՌԱՄԱ 13 տարբերակ:**



ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| | Ներդրումներ Խնայողություն | | Հետվերադարձի ժամկետ (տարիներ) |
|-----------------------------|---------------------------|-------------|-------------------------------|
| | (Եվրո) | (Եվրո/տարի) | |
| Էներգիայի օպտիմալացում՝ | 86,150 | 11,915 | - |
| Ջրի ու նյութի օպտիմալացում՝ | 11,000 | 1,729 | - |
| Թափոնների կրճատում՝ | - | 148 | - |
| Ընդհանուր՝ | 97,150 | 13,792 | 7 |

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

| | Ջուր | Նյութ | Թափոն | Էներգիա | CO ₂ |
|-----------------------------|------------------------|----------|----------|-------------|-----------------|
| | (մ ³ /տարի) | (տ/տարի) | (տ/տարի) | (կՎտժ/տարի) | (տ/տարի) |
| Էներգիայի օպտիմալացում՝ | - | - | - | 229,446 | 77.6 |
| Ջրի ու նյութի օպտիմալացում՝ | 1,290 | 8 | - | - | - |
| Թափոնների կրճատում՝ | - | - | 1.35 | - | - |

Այլ հնարավորություններ

«ՌոզՖուդ» ՍՊԸ-ի կողմից ՌԱՄԱ միջոցառումների շարունակական իրականացումից հետո ձեռք բերված օգուտներն են՝ արտադրության գործընթացի օպտիմալացում, նոր սարքավորումների տեղադրում և էներգիայի սպառման կրճատում (այդ թվում՝ վերականգնվող էներգիայի միջոցով): Ջրի վերամշակման ներքին համակարգը և առաջարկվող այլ միջոցառումներ (պահեստային սենյակների մեկուսացման և օդափոխության ավելի բարձր օպտիմալացում) նույնպես քննարկվում են ընկերության կողմից, թեև այս հրապարակման գրելու պահին դրանք ամբողջությամբ չեն իրականացվել: ՌԱՄԱ-ի կիրառումը հատկապես օգտակար էր սառեցված մրգերի և բանջարեղենի մշակման համար, քանի որ այս արտադրական գիծը պահանջում է ներքին միջավայրի վերահսկում և էներգիայի ռեսուրսների մեծ պահանջարկ: Դրանք իրենց հերթին օպտիմալացվել են ընկերության էներգետիկ համակարգերի արդիականացման միջոցով: «ՌոզՖուդ»-ի կողմից ռեսուրսների օպտիմալացման նախաձեռնողական ուսումնասիրությունը հստակորեն ցույց է տալիս ՌԱՄԱ սկզբունքների հաջող ընդունումը իր գործունեության և կառավարման մեջ:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ կողմից: Այս համատեքստում «ՌոզՖուդ» ՍՊԸ-ն միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի և մշտադիտարկվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում՝ ստուգելու իրականացված ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանելու իրենց բնական կապիտալն ու բարձրացնելու մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրի առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցություններն ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին հիմնադրու համար այցելե՛ք www.eu4environment.org:

Այս հրապարակումը լույս է տեսել Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը բացառապես ՄԱԿ ԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն
Տիլին Տատյանա Չերնյավսկայա
ԵՄ-ն շրջակա միջավայրի համար Ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ: t.chernyavskaya@unido.org



Կովկասի ՏԲԿ
Հայաստանի ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.rec.am
Հեռ: +374 115 75 148